«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Թանգամյան Թերեզա Համլետի

Ուսումնական հաստատություն՝ Մարզ Արագածոտն, քաղաք Աշտարակ, Ներսես Աշտարակեցու անվան թիվ 1 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն ---------- 3-5

Արժեքները տեսական գրականության մեջ ---------- 6-8

Սովորողների մեջ բարոյական արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում ----------9-13

Եզրակացություն ----------

Օգտագործված գրականության ցանկ ----------

Ներածություն

Հետազոտության արդիականությունը – Ներկայումս դարի հրամայականն է դարձել ունենալ մրցունակ, գիտակից, գիտելիքանհենք հասարակություն, որը պայմանավորված է մարդուն ՝ որպես գլխավոր կապիտալ դիտարկելը: Տեխնոլոգիական զարգացման աննախադեպ տեմպերը լուրջ փոփոխությունների են հանգեցնում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, և անհրաժեշտություն է առաջանում վերաիմաստավորելու մարդու տեղն ու դերը վերարտադրության ողջ գործընթացում: Կարևորագույն ռեսուրս է մարդկային կապիտալը, որն իր արտացոլումն է գտնում զարգացած երկրների տնտեսական քաղաքականության առաջնահերթություններում՝ առանձնակի ուշադրություն հրավիրելով կրթության, գիտության, առողջապահության զարգացման վրա: Օրըստօրե կարևորվում է մարդկային կապիտալի այնպիսի հատկանիշ, ինչպիսին է քաղաքական և սոցիալական կայունության ձգտումը, ինչը ձեռք է բերվում համապատասխան կրթության և դաստիարակության միջոցով: Բարոյական արժեքները լինելով մարդ արարածի անբաժան մաս կանխորոշում են վերոնշյալ բոլոր գործընթացները: Դրանց ճիշտ ընտրության և սերմանալու միջոցով է հնարավոր միայն հաղթահարել այն բոլոր խնդիրները, որոնք դրված են պետության և հասարակության առջև: Հայաստանի նորանկախ Հանրապետության առջև ծառացած խնդիրներից մեկն էլ հետխորհրային կարգերի մնացորդները հավաքագրելը և հօգուտ հասարակության օգտագործելն էր: Համաշխարհային տնտեսական, տեխնոլոգիական, մշակութային զարգացումները ենթադրում էին նաև արժեքների վերանայման կարիք: Մշակութային փոխանակության հետ միաժամանակ կատարվում է ազգային մշակույթների՝ աննախադեպ մասշտաբի և խորության փոխներթափանցում, որը մեծապես ասիմետրիկ է: Արժեքային համակարգի հիմքերը սասանող այս գործոնի կամ միջոցի հետ պետք է գործել շատ զգուշորեն, որն էլ հենց դրված է ուսուցչի ուսերին ՝ հաշվի առնելով նրա դերը աշակերտի որպես անհատ ձևավորման և հետագա գործունեության մեջ: Ժամանակակից աշխարհում կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման

ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ որպես հանրային կրթության հիմնական օղակի նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Հետազոտության նպատակը – Վերլուծել և առաջ քաշել Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական շրջանակներում արժեքային համակարգի ձևավորման ընթացքում գոյություն ունեցող խնդիրները, գտնել դրանց ճիշտ և արդյունավետ լուծման եղանակները:

Հետազոտության օբեկտը – Կրթության բնագավառում բարոյական արժեքների ներդրման և դրանք ըստ իրենց նշանակության գործադրելու մեխանիզմները:

Հետազոտության խնդիրները- Հետազոտության նպատակով և օբյեկտով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Հետազոտության հիմնախնդիրների վերաբերյալ հոգեբանամանկավարժական, պատմական և մեթոդական գրականության, օրենսդրության վերլուծությունների հիման վրա բացահայտել դպրոցներում արժեքային համակարգի հիմնախնդիրները և դրանց առաջացման պատմամանկավարժական հիմքերը,
2. Հետազոտել դպրոցներում կառավարման և ուսումնադաստիարակչական գործընթացի էությունը և վեր հանել առկա խնդիրները՝ շեշտադրելով ազգայինի, հայոց լեզվի, գրականության, պատմության, մշակույթի պահպանման ու ազգային դաստիարակության իրականացման անհրաժեշտությունը,
3. Առաջադրել առկա կրթադաստիարակչական հիմնախնդիրների լուծմանը միտված արդյունավետ ուղիներ, որոնք կնպաստեն աշակերտների բարոյական արժեքների ճիշտ դաստիարակմանը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը- Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել տեսության և պրակտիկայի փոխկապվածության, արժեբանական, մարդասիրական, համակարգային մոտեցումներն ու սկզբունքները, անձի զարգացման, արժեհամակարգի և մարդասիրական դիրքորոշումների ձևավորման վերաբերյալ տեսությունները:

Բովանդակություն

Արժեքները տեսական գրականության մեջ

Գրականության մեջ առանձնացնում են «արժեք» հասկացության առավել քան հարյուր սահմանումներ, որոնցում առաջարկվում են տվյալ խնդրի դիտարկման տարբեր մոտեցումներ: Յուրաքանչյուր հասարակություն ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ: Այն մանկավարժության գլխավոր խնդիրներից է: Մոտեցումների և սահմանումների բազմատեսակության մեջ «արժեք» հասկացությունը պայմանականորեն կարելի է բաժանել 2 խմբի: Առաջին խմբում ներառված են հասկացություններ, որոնց հեղինակներն արժեքները դիտում են որպես կարծիք, պատկերացում կամ համոզմունք[1]: Երկրորդ խումը ներառում է այն սահմանումները, որոնց հեղինակները արժեքը սահմանում են որպես սոցիալական դիրքորոշումների կամ հետաքրքրությունների տարատեսակ[2]: Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում: Այն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Ժ. Պիաժեն անձի արժեքային կողմնորոշումների զարգացումը կապում է ինտելեկտուալ զարգացման մակարդակի հետ: Նա համարում էր, որ բարոյական դատողությունների ներքնայնացումը երեխաների մոտ տեղի է ունենում զարգացող մտածողական կառուցվածքների և աստիճանաբար ընդլայնվող սոցիալական փորձի փոխազդեցության արդյունքում: Եթե զարգացման առաջնային փուլում երեխան բարոյական նորմերը դիտարկում է որպես հաստատված և անփոփոխ, իսկ արարքի բարոյական գնահատման չափանիշը բացառապես դրա հետևանքներն են, ապա վերացական մտածողության զարգացմանը զուգընթաց (6-7 տարեկան) երեխայի մոտ առաջանում է արարքը ոչ միայն հետևանքների, այլև մտադրության տեսանկյունից գնահատելու ընդունակություն: Այսպիսով, երեխայի վերացական ինտելեկտի զարգացմանը

[1] Տե՛ս Rokeach M., The Nature of Human Values. N.Y.: Hie Free Press, 1973

[2] Տե՛ս Вебер М., Основные социологические понятия, Избр. произведения, Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова. М.: Прогресс, 1990 էջ 602-643

զուգընթաց ձևավորվում է բարոյական գնահատականների հարաբերականության, դրանց պայմանական բնույթի մասին պատկերացում[3]:

Բարոյական դաստիարակության տեսական հիմքերը բխում են բարոյագիտությունից, որն ուսումնասիրում և մշակում է բարոյական վարքագծի չափանիշներ՝ համամարդկային արժեքների և հասարակության կողմից ներկայացվող էթիկական պահանջների համադրման եղանակով: Բարոյականությունը բարոյական վարքի, նորմերի և կանոնների գիտակցման աստիճան է, ներքին սուբյեկտիվ դիրքորոշում աշխարհի հանդեպ: Բարոյականության հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է. այն դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

- Բարությամբ՝ մարդասիրական վարքագծով, բարյացակամ վերաբերմունքով արտաքին աշխարհի նկատմամբ:
- Արդարամտությամբ՝ վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատում:
- Գեղեցկությամբ՝ գեղեցիկի սկզբունքներին համապատասխանող վարքագծով, գեղեցիկը տգեղից տարանջատելու կարողությամբ:
- Հանդուրժողականությամբ՝ ներողամիտ վարքագծով, սխալվելու հնարավորության ընդունմամբ[4]:

Գրականության մեջ առանձնացվում է մի շարք գործընթացներ, որոնցում տեղի է ունենում անձի արժեքային կողմնորոշումների համակարգի ձևավորումը և զարգացումը: Այդ գործընթացներն են պերսոնալացումը, որը ներառում է հարմարումը (որպես անհատի կողմից արժեքների յուրացում), անհատականացումը (որպես սեփական «Ես»-ի արժեքների ամրապնդում) և ինտեգրումը (որպես անձի և խմբի արժեքների միջև առկա հակասությունների վերացում՝ դրանց փոխակերպման ճանապարհով)[5]: Արժեքների անհատական համակարգի ձևավորման միջավայրային գործոններ հանդես են գալիս ընտանիքը, դպրոցը, որոնցում երեխան հաղորդակցվում է նորմերի և արժեքների համակարգի հետ: Սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքի

[3] Տե՛ս Флейвелл Дж., Генетическая психология Жана Пиаже [Текст]: Пер. с англ. / Дж. Флейвелл. М.: Просвещение, 1967, էջ 623
[4] Տե՛ս Թոփուզյան Ա. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ: Երևան: «Լինգվա»: 2009թ. Էջ 298
[5] Տե՛ս Петровский А. В., Личность. Деятельность. Коллектив. М.: Политиздат, 1982, էջ 255

դերը՝ որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք: Ընտանիքը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի մշակույթի կրողն է, այլև փոխանցողը: Ինքնության հարցը ներընտանեկան միջանձնային փոխհարաբերություններում դրսևորվում է հենց ազգային ինքնագիտակցության, մայրենի լեզվին տիրապետելու, պապենական արմատները ճանաչելու, Հայ առաքելական եկեղեցու պատկանելության և ազգային սովորույթների պահպանման գործընթացներում:

Այսպիսով, անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը պետք է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Այդ գործընթացում հատկապես կարևորվում է ներքնայնացման գործընթացը՝ որպես սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքները: Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները:

Սովորողների մեջ բարոյական արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Արագորեն կատարվող փոփոխությունները պարտադրում են հստակեցնել կրթական քաղաքականության ռազմավարական և մարտավարական հիմնական ուղղությունները, հաշվի առնել հանրության և աշխատաշուկայի պահանջները, ազգային անվտանգության ապահովման խնդիրները և ըստ այդմ արդիականացնել հանրակրթության բովանդակությունը՝ նպաստելով Հայաստանի Հանրապետության արժանապատիվ, պատասխանատու քաղաքացիների, հաջողակ անհատների կայացմանը: Բարոյական արժեքները կազմում են մարդու արժեհամակարգի նշանակալի մասը: Բարու, արդարի, հայրենասիրության և բարոյական այլ արժեքների նկատմամբ մարդու վերաբերմունքով է պայմանավորված անձի, հասարակության, պետության ներդաշնակ կենսագործունեությունը, ինչն առավել էական է դառնում քաղաքական, տնտեսական, մշակութային ազատությունների, գլոբալացման և մարդկանց ազատ տեղաշարժերին ու ազատ ընտրության իրականացմանը նպաստող այլ գործոնների առկայության շնորհիվ: Ասվածը ցույց է տալիս բարոյական արժեքների ձևավորման խնդրի կարևորությունը: Հանրակրթության առաքելության իրականացումը դիտարկվում է որպես պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր՝ ուղղված ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, պետական մտածելակերպ ունեցող, արդի և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ ազատ, ստեղծագործող և կամային բարձր որակներով օժտված մարդու և քաղաքացու ձևավորմանը:

Հայաստանի Հանրապետությունում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Քանի որ գիտելիքների և կարողությունների հետ միասին հանրակրթությունը ձևավորում է նաև սովորողի արժեհամակարգը, ուստի այնտեղ ներառվում են նաև բարոյական արժեքներ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությանը ներկայացվող ընդհանրական պահանջների մեջ առանձին կետով նշվում են այն արժեքները (նաև՝ բարոյական), որոնք պետք է տա միջնակարգ դպրոցը՝ ըստ ուսումնական բնագավառների և կրթական աստիճանների: Սակայն մեր հանրապետության

հանրակրթական համակարգում բարոյագիտության վերաբերյալ պարտադիր ուսումնական առարկա նախատեսված չէ՝ բարոյագիտությանը նվիրված առանձին նյութեր ընդգրկված են «Հասարակագիտություն» ուսումնական առարկայում (որպես դրա առանձին բաժին):

Հաշվի առնելով այս ամենը «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների ուսուցումը սովորողներին հնարավորություն է տալիս հասկանալու և յուրացնելու արժեքներ, որոնք անհրաժեշտ են առաքինի լինելու համար, գիտակցել և ընդունել մարդու և շրջակա միջավայրի ներդաշնակության կարևորությունը, զարգացնել բարոյական և հոգևոր արժեքների վրա հիմնված հասուն մտածողություն, դրանց շնորհիվ կայացնել բարոյական որոշումներ և լուծել խնդիրներ: Առարկայական չափորոշիչներով հիմնական խնդիրների շարքում նախատեսվում են սովորողների կարեկցանքի, իմաստության, արադարության և ազնվության մասին գիտելիքների խորացումը և բարոյական այդ արժեքների ձևավորումը:

Հայոց լեզվի և գրականություն ուսումնական բնագավառը զարգացնում է աշակերտի հաղորդակցման կարողությունները, լեզվամտածողությունը, ապահովում խոսքային գործունեության բոլոր տեսակների տիրապետումը: Հայոց լեզվի և գրականության շնորհիվ սովորողը ընդլայնում է իր մտահորիզոնն ու աշխարհայացքը, սովորում է մյուս ուսումնական բնագավառների առարկաները, ձեռք է բերում ազգային արժանապատվության խոր զգացում, հպարտություն՝ իր ինքնության համար, անսխալ հայերենով հաղորդակցվելու հմտություն և պատասխանատվություն: «Հայոց լեզու, գրականություն» ուսումնական բնագավառը պետք է նպատակաուղղված լինի՝

1) հայոց լեզվով՝ բանավոր և գրավոր խոսքի միջոցով, սեփական մտքերը, հույզերն արտահայտելու, մարդկանց հետ հաղորդակցվելու, շրջապատող աշխարհը և մարդկանց հասկանալու կարողությունների զարգացմանը.

2) գրական-գեղարվեստական ստեղծագործություններին հաղորդակից դառնալուն, ազգային մշակույթը, նախորդ սերունդների ստեղծած հոգևոր արժեքները գնահատելուն.

3) գրական երկերից սովորածի, նշանավոր մարդկանց կյանքի օրինակով ինքնակրթության, ինքնադաստիարակության, ինքնակատարելագործման մղելուն, սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելուն և զարգացնելուն.

4) Հայաստանի Հանրապետությունում ապրող մյուս ժողովուրդների ազգային լեզուներին և գրական մշակութային արժեքներին ծանոթանալուն.

5) հայերենի անաղարտության և դերի պահպանմանը:

Սույնով, վերոնշյալ առարկաների (և ոչ միայն) առաջարկում եմ ամրապնդելո աշակերտների պատրաստվածությանը ներկայացվող պահանջները և ուսումնառության ակնկալվող արդյունքները ներկայացնել որպես կոմպետենցիաներ՝ հիմք ընդունելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված կրթության վերափոխման հիմնարար չորս՝ <<սովորել իմանալու համար>>, <<սովորել իրականացնելու համար>>, <<սովորել լինելու համար>>, <<սովորել միասին ապրելու համար>> սկզբունքները[6]: Առաջարկվող կոմպետենցիաներն են՝ փոխկապակցված ու փոխլրացնող գիտելիքներ, հմտություններ, արժեքներ, անձնային որակներ, որոնք կարևոր են շրջանավարտի անձնային կայացման, քաղաքացիական ակտիվության, սոցիալական ինտեգրման և հետագա ուսումնառության ու գործունեության համար:

Վերոնշյալով շարադրում եմ այն բարոյական արժեքների շրջանակը, որոնցով պայմանավորվում են այն հիմնախնդիրների լուծումները, որոնք մատնանշել եմ վերևում:

- Աշակերտը պետք է սովորի հնարավորինս ճիշտ գնահատել ինքն իրեն, ունենա վստահություն սեփական ուժերի և հնարավորությունների հանդեպ, ունենա սովորելու կամք, յուրացնի սովորելու և այլոց սովորեցնելու հմտություններ, դրսևորի նորի իմացության և աշխարհաճանաչողության ձգտում, ակտիվ և առողջ հետաքրքրասիրություն:

- Խոսելով բարոյական արժեքների մասին սովորողի մեջ պետք է սերմանել ազգային ու քաղաքացիական գիտակցության դրսևորումը, իր երկրի պատմության ու մշակույթի արժևորումը, ունակությունը ապրելու հասարակական համակեցության կանոններով:

- Անհատը պետք է սիրի իր հայրենիքը, արժևորի սեփական ժողովրդի պատմությունը և մշակույթը, իր ազգային ինքնությունը,իմանա Հայաստանի մշակութային, քաղաքական, իրավական ու տնտեսական հիմքերի և նվաճումների մասին, հարգի ընտանեկան

[6] Տե՛ս https://www.unesco.org/en/articles/reworking-four-pillars-education-sustain-commons

արժեքները, ցուցաբերի հարգալից վերաբերմունք և հանդուրժողականություն ընկերների, շրջապատի մարդկանց նկատմամբ, հասարակական միջավայրում լինի զուսպ և քաղաքավարի, ձգտի բացահայտել իր ներուժը և պատրաստ լինի այն ծառայեցնելու հանրային բարիքի ստեղծմանը:

- Կարևորագույն խնդիր է բարձր պահել աշակերտի իրավագիտակցության մակարդակը, նա պետք է իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, իրազեկ լինի և հարգի մարդու հիմնական իրավունքները և քաղաքացիական ազատությունները, կարողանա արտահայտել սեփական կարծիք և ներկայացնել փաստարկներ, բանավիճել այլ ոչ թե վիճել:

- Երեխան, որպես մեր երկրի քաղաքացի պետք է կարևորի իր ակտիվությունը համայնքում և լինի աջակցող, մարդկանց կարիքների նկատմամբ դրսևորի համարժեք վերաբերմունք, գիտակցի բարոյական նորմերին հետևելու անհրաժեշտությունը, լինի դրանց կրողը: Կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ, հարգանք ունենա մեծահասակների հանդեպ, գնահատի և արժևորի նրանց վաստակը, մասնակցություն ունենա հանրային կյանքին, կատարի արդյունավետ թիմային աշխատանք, աշխատանքում լինի գործունյա և նախաձեռնող, ունակ լինի համագործակցելու համայնքի անդամների հետ:

- Աշակերտը պետք է լիարժեք տիրապետի գրական հայերենին, խոսի և գրի գրագետ, սեփական մտքերն ու տեսակետներն արտահայտի հակիրճ և դիպուկ, հասկանա, բացատրի, վերլուծի և ներկայացնի տարբեր բարդության, ծավալուն գրավոր տեքստեր, կատարի ընթերցած գրականության, տարբեր ժանրերի ստեղծագործությունների վերլուծություններ, գնահատի գեղարվեստական երկի արժանիքները:

Ուսուցչի և աշակերտի փոխհարաբերություններում կարևորվում են նաև ուրիշի հանդեպ հարգանքի և պարտքի զգացմունքները: Աշակերտի հանդեպ ցուցաբերելով հանդուրժողականություն, բարեհաճություն, մարդասիրություն և կարեկցանք՝ ուսուցիչը նրա մեջ սերմանում է այդ հատկանիշները՝ զերծ պահելով նախանձից ու չարախնդությունից: Հարգանքին հակասող գծեր են մեծամտությունը, այլատեցությունը և չարախոսությունը: Այս երևույթները կարող են դրսևորվել ուսուցման գործընթացում՝ ինչպես ուսուցիչ-աշակերտ, այնպես էլ աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում: Բացասական բարոյական որակների ձևավորմանը կարող են հանգեցնել նաև հուշելը, տնային առաջադրանքներն արտագրելը և նմանատիպ այլ արարքներ: Եվ քանի որ բարոյականության ոլորտում վարքը առաջնային է համարվում գիտակցության նկատմամբ, ուստի նմանատիպ երևույթները բացառելու համար ուսուցիչը առաջին հերթին պետք է դիմի աշակերտների բարոյական գիտակցությանը՝ բացատրելով հուշելու, տնային աշխատանքը արտագրելու և այս կարգի արարքների վնասակար հետևանքները, այլապես սովորողը չի հրաժարվի դրանց հանգեցնող գործողություններ կատարելուց: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում[7]:

[7] Տե՛ս Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում, էջ 112

Եզրակացություն

Ամփոփելով հետազոտական աշխատանքս, ցանկանում եմ ևս մեկ անգամ նշել, որ դպրոցական տարիքի երեխան նման է ամբողջական մի զգայարանի. ընկալում և զգում է ամեն մանրուք, միշտ պատրաստ է արձագանքելու և հուզականությամբ մասնակցելու շրջապատում տեղի ունեցող իրադարձություններին: Այս հետազոտական աշխատանքովս շոշափել եմ մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Ազգային արժեքային համակարգի գլխավոր նպատակը կայացած անհատներ դաստիարակելն է: Վերջիններս այն հենասյուներն են, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը: Արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Մեր օրերում հրատապ է անհատի հոգևոր զարգացման հիմնահարցը ազգային մշակույթի, արժեքների պահպանման և գալիք սերունդներին փոխանցման համատեքստում: Գրականության և արվեստի ստեղծագործություններն ընդունելով որպես կյանքի ու մարդկային հարաբերությունների գեղարվեստական արտացոլման հիմնական տեսակներ՝ ևս մեկ անգամ ընդգծում եմ, որ անհատը, շփվելով արվեստի հետ, եզակի հնարավորություն է ստանում այն ընկալել ու ընդունել որպես հոգևոր հարստացման գործոն: Հետազոտությանս հիմնախնդիրը ներկա ժամանակաշրջանի պահանջների և հայ դպրոցում դպրոցականների հոգևոր զարգացման ու դաստիարակության առկա իրավիճակի միջև հակասությունների հաղթահարման սոցիալ¬մանկավարժական պայմանների որոշումն է, որի լուծման առաջարկները նշել եմ վերևում իրենց համապատասխան հիմնավորումներով: Հուսով եմ, որ վերոնշյալ դրույթները կկիրառվեն մեծ թվով ուսուցիչների կողմից, և մոտ ապագայում կունենանք այն արդյունքը, որին երկար ժամանակ ձգտել և սպասել ենք: Ի գործ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Rokeach M., The Nature of Human Values. N.Y.: Hie Free Press, 1973

2. Вебер М., Основные социологические понятия, Избр. произведения, Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова. М.: Прогресс, 1990

3. Флейвелл Дж., Генетическая психология Жана Пиаже [Текст]: Пер. с англ. / Дж. Флейвелл. М.: Просвещение, 1967

4. Թոփուզյան Ա. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ: Երևան: «Լինգվա»: 2009թ.

5. Петровский А. В., Личность. Деятельность. Коллектив. М.: Политиздат, 1982

6. https://www.unesco.org/en/articles/reworking-four-pillars-education-sustain-commons

7. Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում